ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Ե-85161-2026

ք. Արմավիր, Մյասնիկյան 15Ա
060-713-513

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐ ԱՐՄԱՎԻՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՈՐԿՈՒ 3 ՆՐԲ. 17

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից 20 մայիսի 2026թ. տրված թիվ 1306-Ա կատարման ենթակա ակտի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնում 30.07.2026թ. հարուցվել է թիվ 15179774 կատարողական վարույթը:

Կատարողական վարույթով պետք է՝ Գագիկ Ժորայի Հովհաննիսյանից Պետ. բյուջեի օգտին բռնագանձել 2.600.000 ՀՀ դրամ, ինչպես նաև կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Կատարողական վարույթի շրջանակում արգելադրվել է Գագիկ Ժորայի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ Մրգաշատ գյուղ վկայականի համար՝ 13112012-04-0285 անշարժ գույքը, որը ենթակա է հարկադիր իրացման:

Տեղեկացնում ենք, որ

«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝

(...)

2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին:

Որպես տվյալ գույքի սեփականատեր տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության (համապատասխան ստորաբաժանման) դեպոզիտ հաշվին:

Միջնորդության բացակայության պարագայում, ՀՀ Արմավիրի մարզ Մրգաշատ գյուղ վկայականի համար՝ 13112012-04-0285 անշարժ գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի՝ 2.274.625 ՀՀ դրամի 80%-ի չափով, որը կազմում է 1.819.700 ՀՀ դրամ:

Նույն օրենքի 52-րդ հոդվածի համաձայն՝

(...)

Կատարողական վարույթի մասնակիցը և այլ անձինք պարտավոր են վարույթում ներկայացվող իրենց միջնորդությանը և բողոքին կցել տվյալ միջնորդության, բողոքի և դրանց կից փաստաթղթերի պատճենները կատարողական վարույթի մյուս մասնակիցներին ուղարկելու, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ այդ փաստաթղթերը նրանց կողմից ստանալու փաստը հավաստող ապացույցներ կամ ներկայացնել այդ պարտականությունը կատարելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումներ, բացառությամբ այն միջնորդությունների, որոնցով կատարողական վարույթի մասնակիցն իրականացնում է իր իրավունքները, և որոնք չեն ազդում կատարողական վարույթի մյուս մասնակիցների իրավունքների, պարտականությունների, շահերի, կարգավիճակի և վարույթի ընթացքի վրա:

Սույն ծանուցումն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացվել նաև ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքի՝ www.azdarar.am կայքի միջոցով և «Կատարողական վարույթի մասին» օրենքի 25 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հասցեատերերը կհամարվեն պատշաճ ծանուցված փաստաթուղթը ինտերնետային կայքում տեղադրվելուն հաջորդող հինգերորդ օրը:

Հարգանքով՝
ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԳՆԴԱՊԵՏ

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ստորագրող
ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
1511720255

2026-11-11 15:20:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կատարող՝ Արմավիրի մարզային բաժին
Անդրանիկ Աբրահամյան
Հեռ. ՝ 060713514